ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մայիսի 8-ից 11-ը

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Աննա Բերակչյան՝ ՀՀ ՊԵԿ մաքսային վիճակագրության և եկամուտների հաշվառման վարչության պետի տեղակալ (ժ/թ):

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 2023թ. Մայիսի 8-ից 11-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարահային մաքսային կազմակերպություն (ՀՄԿ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղվել եմ Համաշխարհային մաքսային կազմակերպության (ՀՄԿ) կողմից կազմակերպված Տվյալների և վիճակագրության աշխատանքային խմբի (WGDS) երկրորդ հանդիպմանը մասնակցելու նպատակով (ներգրավված եմ տվյալ աշխատանքային խմբերում): Հանդիպումները տեղի էին ունենում Բելգիայի Թագավորության մայրաքաղաք Բրյուսելում՝ ՀՄԿ կառույցում: Մասնակցում էին շուրջ 48 ՀՄԿ անդամ երկիր: Աշխատանքային խմբերի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մաքսային ծառայության քաղաքականության մշակման, տվյալների փոխանակման արդյունքում միասնական իրավական չափորոշիչների ամրագրման և մաքսային ոլորտում կիբերանվտանգության ամրապնդմանն ուղղված քայլերով հնարավոր կլինի ձևավորել նշված ոլորտում ցանկալի արդյունքի հասնելու տեսլականը:

5. Քննարկված թեմաները՝

ՀՄԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Ռիկարդո Տրեվիոն իր բացման խոսքում մեծ ուրախությամբ ողջունեց ներկաներին, կարևորեց հանդիպումների օրակարգը, որը ներառում էր այնպիսի թեմաներ, ինչպիսիք են մաքսային վիճակագրության ստանդարտների շրջանակի մշակումը, տվյալների պորտալի ստեղծումը՝ գաղտնիությունը պահպանող տեխնոլոգիաների օգտագործմամբ (նոր գործիքների մշակումն ու կիրառումը): Նշեց և կարևորեց նաև աշխատանքային խմբի հիմքում ընկած հավաքական ջանքերի, կառուցողական քննարկումների, ՀՄԿ անդամների նախաձեռնությունների և կարծիքների, փորձի փոխանակման մեծ դերը մաքսային վիճակագրության և տվյալների վերլուծության համար ամուր հիմքեր ստեղծելու գործում:

Հանդիպմանը զեկույցներով հանդես եկան երկու աշխատանքային խմբերի ղեկավարները՝ ներկայացնելով և ամփոփելով վերջին ամիսների ընթացքում աշխատանքային խմբերի շրջանակներում կատարված աշխատանքները և դրանց արդյունքները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տվեցին բեղմնավոր արդյունքեր, եղան բուռն քննարկումներ տվյալ թեմաների շուրջ: Քննարկումներ եղան նաև ՀՄԿ տարեկան հաշվետվության (հարցաշարի) ներկայացման մասով, բարձրացվեցին մի շարք համընդհանուր խնդիրներ, որոնց պատվիրակներն առնչվել էին վերջին տարիների ընթացքում: Առաջարկություններ հնչեցին ՀՄԿ տարեկան հաշվետվության որոշ հարցերում հետագայում խմբագրումներ, փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Հանդիպումները կարևորվեցին նաև տվյալների փոխանակման հարցում. առաջարկվեցին գաղտնիության պահպանման նպատակով նոր տեխնոլոգիաների, նոր գործիքների մշակում:

Զեկույցով հանդես եկան Արժույթի միջազգային հիմանադրամի (IMF) ներկայացուցիչը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) ներկայացուցիչը, ներկայացրեցին տեսասահիկներ՝

ներառելով իրենց փորձը տվյալների հավաքագրման, վերլուծության, հրապարակման վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Մասնակիցները ընդհանուր համաձայնություն ձեռք բերեցին մաքսային վիճակագրության ստանդարտացված մոտեցումների վերաբերյալ և ընդունեցին նախնական փաթեթը՝ սահմանումներով և չափորոշիչներով ներառված: Վերջինս լինելու է ՀՄԿ-ի կողմից մշակված մաքսային վիճակագրության սահմանումների և չափորոշիչների ուղեցույց՝ անդամ երկրների համար:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Կարևորելով ՀՄԿ անդամ պետությունների փորձը տվյալ ոլորտում, պետք է ընդգծել, որ մասնակցությունը տվյալ հանդիպումներին ևս մեկ քայլ է մաքսային ծառայությունների փոխըմբռնման և համագործակցության ամրապնդման ուղղությամբ:

Մասնակցությունը, փորձի փոխանակումը տվյալ աշխատաժողովներին էական ազդեցություն են ունենում մաքսային ոլորտում վիճակագրության վարման, տվյալների փոխանակման գործընթացում արդյունավետ իրականացման համար: Հանդիպումները ծառայեցին որպես ամուր հարթակ համատեղ ջանքերի և գիտելիքների փոխանակման համար՝ ճանապարհ հարթելով մաքսային վիճակագրության և տվյալների վերլուծության ոլորտում առաջընթացի համար:

Աշխատանքային հանդիպման ավարտին մասնակիցները ձեռք բերեցին մաքսային ոլորտում մարմինների աշխատակիցների, միջազգային փորձագետների և մասնակից պետությունների պատվիրակության անդամների հետ ավելի սերտ համագործակցության հմտություններ, որը հնարավոր կլինի օգտագործել ամենօրյա պրակտիկ աշխատանքում, ինչը կնպաստի տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծության որակի բարձրացմանը: Ցանկացած մաքսային մարմնի համար կարևոր

է ստեղծել անվտանգության գործուն միջոցներ (ենթակառուցվածքներ)՝ տվյալների պաշտպանությունն ապահովելու համար:

Փակման խոսքում կառույցի ղեկավար Թեյլ Քանգը իր երախտագիտությունը հայտնեց մասնակիցներին՝ առողջ քննարկումների, ոլորտում՝ արժեքավոր ներդրումների համար: Հանդիպումների արդյունքները կներկայցվեն ՀՄԿ հանձնաժողովի հաջորդ նիստին՝ սույն թվականի հունիսին:

Տվյալների և վիճակագրության աշխատանքային խմբի (WGDS) հաջորդ նիստերը տեղի կունենան ՀՄԿ կառույցում՝ սույն թվականի նոյեմբեր ամսին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

15.05.2023թ.